Таблица

Результаты классификации и объектов производства

Характеристики внутри классов	Характеристики между классами
$\Phi(A_1A_1)=0,851$	$\Phi(A_1A_2)=0,4973$
$\Phi(A_2A_2)=0,9407$	$\Phi(A_1A_3)=0,1864$
$\Phi(A_3A_3)=0,8615$	$\Phi(A_2A_3)=0,4069$

Полученные данные позволяют осуществить равномерную загрузку оборудования и повысить коэффициент его использования. Предложенный подход может с большой эффективностью применяться в целях повышения интенсивности производства и развития оперативного управления.

ЛИТЕРАТУРА

1. Распознавание образов. Состояние и перспективы / Под ред. **К. Верхавина.** - М.: Радио и связь, 1985. - 104 с.
2. **Фомин Я.А., Тарловский Г.Р.** Стратегическая теория распознавания образов. - М.: Радио и связь, 1986. - 263 с.

ГИУА 20.10.1996

Изв. НАН и ГИУ Армении (сер. ТН), т. LI, № 3, 1998, с. 388-390.

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ

ՀԱՄԼԵՏ ԼԱԶՐԻ ԱՐՏԵՄՅԱՆ

(ԾՆՆԴՅԱՆ 60 -ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ինստիտուտի գիտական քարտուղար, տեխնիկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, փոխգնդապետ Համլետ Լազրի Արտեմյանը 60 տարեկան է:

Հ.Լ. Արտեմյանն ունի շուրջ 40 տարվա գիտամանկավարժական աշխատանքի փորձ: Որպես գիտնական նա ձեւավորվել է ՀՀ եւ Մոսկվայի արդյունաբերական եւ գիտահետազոտական ձեռնարկություններում (Երեւանի ալյումինի գործարան 1959-66 թթ., էլեկտրամեքենաշինության ԳՀԻ 1969-94 թ.թ., Մոսկվայի ծանր մեքենաշինության ԳՀԻ 1966-68թ.թ.):

Հ.Լ. Արտեմյանը 1968 թվականից տեխնիկական գիտությունների թեկնածու է, 1977 թվականից վկայագրված ավագ

գիտական աշխատող «մեքենաների, սարքերի եւ ապարատների դինամիկա եւ ամրություն» մասնագիտությամբ, նույն մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների դոկտոր է 1991, պրոֆեսոր 1992 թվականից:

Հ.Լ. Արտեմյանի գիտական գործունեության հիմնական ուղղությունը եղել է մեքենաշինական տարբեր կառուցվածքների (էլեկտրական մեքենաներ, չափիչ սարքեր, ռոտորային համակարգեր, առանցքակալային հանգույցներ, մեքենաների մասերի կոնտակտային միացություններ, շարժաբերներ, բարձր ճնշման կաթսաներ եւ խողովակներ, թրթռամեղմիչներ եւ այլն) դինամիկական ամրության, հուսալիության եւ թրթռահնչականության (վիբրոակուստիկ) բնութագրերի հետազոտումը: ԽՍՀՄ էլեկտրատեխնիկական եւ պաշտպանության նախարարությունների պատվերներով, ԽՍՀՄ Գիտության եւ տեխնիկայի պետական կոմիտեի ծրագրերով եւ արտասահմանյան երկրների հետ միջազգային համագործակցության պայմանագրերով, Հ.Լ. Արտեմյանի ղեկավարությամբ եւ անմիջական մասնակցությամբ կատարվել են 40-ից ավելի գիտահետազոտական եւ նախագծային-կոնստրուկտորական աշխատանքներ, որոնց զգալի մասը գործող սարքավորումների կամ ղեկավարող փաստաթղթերի տեսքով ներդրվել են ԽՍՀՄ տասնյակ գործարաններում եւ նախագծային ինստիտուտներում: Պրոֆ. Հ.Լ. Արտեմյանի կարեւորագույն գիտական նվաճումներից է տեխնիկական համակարգերի թրթռահուսալիության ընդհանուր խնդրի ձեւակերպումը, լուծման տեսական եւ փորձնական մեթոդների մշակումը, կառուցվածքների թրթռահուսալիության բարձրացման գործնական եղանակների հայտնագործումը եւ ներդրումը:

Պրոֆ. Հ.Լ. Արտեմյանը զգալի արդյունքների է հասել նաեւ գիտական կադրերի պատրաստման եւ կատարելագործման հարցերում: Նրա ղեկավարությամբ կամ խորհրդատվությամբ հանրապետության 10 մասնագետներ պաշտպանել են թեկնածուական թեզեր մեքենաշինական կառուցվածքների ամրության եւ հուսալիության զանազան խնդիրներով: Նրան հաջողվել է ստեղծել ամրության տեսության մասնագետների յուրահատուկ գիտական դպրոց: Նա Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի դոկտորական թեզերի պաշտպանության «մեքենագիտություն եւ մեքենաշինություն» - 034 մասնագիտացված գիտական խորհրդի անդամ է:

Շուրջ 20 տարի Հ.Լ. Արտեմյանը եղել է ԽՍՀՄ էլեկտրատեխնիկական նախարարության գիտատեխնիկական խորհրդի անդամ, միութենական պատվիրակությունների կազմում բազմիցս ներկայացրել է ԽՍՀՄ եւ ՀՀ գիտարդյունաբերական պրոբլեմները արտասահմանյան երկրներում, աշխատակցել է գիտատեխնիկական ամսագրերի խմբագրություններին:

Հ.Լ. Արտեմյանը շուրջ 130 գիտական աշխատանքների հեղինակ է (80-ից ավելին բաց հրատարակությամբ), գիտական զեկուցումներով հանդես է եկել հանրապետական, համամիութենական եւ միջազգային ավելի քան 20 կոնֆերանսներում եւ գիտաժողովներում: Նրա աշխատանքները մի քանի անգամ արժանացել են գիտատեխնիկական ընկերությունների

հանրապետական եւ միութենական մրցույթների մրցանակների (1980, 1983, 1985, 1987 թթ.) եւ ԽՍՀՄ ԺՏՆՑ դիպլոմների (1976, 1986 թթ.):

1994թ. սեպտեմբեր ամսից Հ.Լ. Արտեմյանը ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով զորակոչվել է ՀՀ Զինված ուժերի շարքերը եւ նշանակվել Պաշտպանության նախարարության նորաստեղծ Բարձրագույն զինվորական բազմաբնույթ հրամանատարական ուսումնարանի (այժմ Ռազմական ինստիտուտ) խոշորագույն ամբիոններից մեկի ընդհանուր ճարտարագիտական առարկաների ամբիոնի պետ: Կարճ ժամանակահատվածում նրա անմիջական ղեկավարությամբ եւ մասնակցությամբ կատարվել է ուսումնագիտական եւ կազմակերպչական աշխատանքների մեծ համակարգ:

- ինստիտուտի ութ ռազմական մասնագիտությունների համար մշակվել եւ ներդրվել են ավելի քան 15 ճարտարագիտական առարկաների ուսումնական ծրագրերը,

- ձեւավորվել է ճարտարագիտական առարկաների ողջ համակարգի դասավանդման մասնագիտական կառուցվածքը,

- ստեղծվել են 100-ից ավելի մեթոդական ցուցումներ առանձին առարկաների դասավանդման վերաբերյալ,

- նախագծվել են ճարտարագիտական առարկաների դասավանդման եւ գիտական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ լաբորատորիաներ,

- մշակվել է ինստիտուտի ուսումնագիտական գործունեությունը կարգավորող իրավական փաստաթղթերի խոշոր համակարգ (գիտական աշխատանքների կատարման, ուսումնական գործընթացի կազմակերպման եւ վերահսկման, գիտական խորհրդի, խմբագրահրատարակչական եւ կուրսանտական ռազմագիտական խորհուրդների գործունեության, նորարարական եւ գյուտարարական աշխատանքների կազմակերպման եւ այլն):

Հ.Լ. Արտեմյանը զգալի ներդրում ունի ուսումնագիտական աշխատանքների կազմակերպման եւ իրականացման գործում: Նրա ակտիվ մասնակցությամբ ձեւավորվել են ինստիտուտի գիտական հեռանկարային պլանները, առաջարկներ ռազմաարդյունաբերական համալիրի հեռանկարային մշակումների համար, համագործակցության պլաններ Ռազմական ինստիտուտի եւ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի միջեւ, որոնք հաջողությամբ իրագործվում են ի նպաստ սպայական կադրերի պատրաստման համակարգի կատարելագործման:

Տեղեկագրի խմբագրական կոլեգիան շնորհավորում է ակնառավոր գիտնականին ծննդյան 60-ամյակի առթիվ, մաղթում նրան քաջառողջություն եւ երկար տարիների հայրենանվեր գործունեություն: